

ԱՐՊՀ
ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ.....	2
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ	3
3. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԱՐՊՀ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	8
4. ՍՈՎՈՐՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ	10
5. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.....	12
6. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
7. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ	13
8. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	14
9. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ- ՆԵՐԸ.....	15
10. ԱՐՊՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ.....	15

1. Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԱրՊՀ) վարչական, գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողների ու սովորողների համայնքի առաքելությունը կրթության ամուր հիմքի, հաջող ուսումնառությանը նպաստող պայմանների ստեղծումն ու զարգացումն է, բարոյականության համընդհանուր սկզբունքների պահպանման համար անձնական պատասխանատվության գիտակցումը, ինչպես նաև համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ ու քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:

2. ԱրՊՀ գործունեության գլխավոր նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է և ինքնուրույն մտածողությամբ օժտված ստեղծագործ անհատի ձևավորումը, ով տիրապետում է մասնագիտական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ կայուն հմտությունների, կարողությունների և աչքի է ընկնում գաղափարական ներուժով, մասնագիտական, մտավոր և սոցիալական ստեղծարարությամբ, բարոյական բարձր հատկանիշներով:

3. Սույն էթիկայի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) նպատակն է ԱրՊՀ համայնքի անդամների համար սահմանել բարոյական արժեհամակարգ և վարվեցողության կանոններ, օգնել նրանց՝ իրենց վարքագիծն այդ պահանջներին համապատասխանելու գործում և տեղեկացնել հասարակությանը, թե ԱրՊՀ համայնքի անդամներից ինչպիսի էթիկական վարքագիծ պիտի ակնկալի:

4. Կորպորատիվ մշակույթի և արժեքների ամրապնդման, համատեղ աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացման համատեքստում ԱրՊՀ համայնքը՝

1) կառավարման համակարգում ղեկավարվում է ժողովրդավարության, կոլեգիալության և համագործակցության սկզբունքներով,

2) ձգտում է կրթության մատչելիության ապահովման՝ պահպանելով ուսումնագիտական գործընթացի բարձր որակական չափանիշները և ամրապնդելով հետազոտական ու մտավոր ներուժը, ԱրՊՀ նյութատեխնիկական բազան,

3) սովորողների համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ՝ հասնելու կրթական և մշակութային բարձր մակարդակի՝ անկախ սեռից, եկեղեցու և կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, ազգությունից, ծագումից, անձնային կողմնորոշումներից ու հայացքներից, համոզմունքներից, սոցիալական ու նյութական դրությունից,

4) խրախուսում է ակադեմիական ազատության և փոխըմբռնման մթնոլորտը՝ ստեղծելով այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են աշխատակիցների մտավոր, մասնագիտական և անձնային ներուժի արդյունավետ իրագործմանը, հիմնարար և կիրառական հետազոտությունների զարգացմանը, աշխատողների և սովորողների գիտահետազոտական գործունեությանը,

5) ամրապնդում է շրջանավարտների հետ կապը, ձգտում է ապահովել նրանց մասնագիտական և հասարակական բարձր կարգավիճակը:

5. Կանոնագրքում հնարավոր չէ կանխատեսել հանրային կյանքի հավանական բոլոր իրավիճակները, ուստի նրանում տեղ գտած նորմերն ու պահանջները չեն հավակնում փոխարինելու մարդու անձնային կողմնորոշումներին ու համոզմունքներին, խղճին ու

պատասխանատվությանը, այլ ուղղորդում են դրանք՝ համայնքի առջև դրված խնդիրների որակյալ կատարման համար:

6. ԱրՊՀ համայնքի անդամները՝ վարչական, գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական, ուսումնասօժանդակ և այլ կազմի աշխատողները, սովորողները ընդունում են Կանոնագիրքը և պարտավորվում են հետևել դրա հետևյալ դրույթներին՝

- ղեկավարվել համընդհանուր և համամարդկային արժեքներով, ազգային ավանդույթներով, արդարության ու ազնվության վրա հիմնված բարոյականության սկզբունքներով ու նորմերով,

- հավատարիմ լինել ակադեմիական համայնքի կորպորատիվ մշակույթի զարգացմանն ու ամրապնդմանը, ԱրՊՀ հեղինակության պահպանմանը,

- գիտակցել իրենց անձնական պատասխանատվությունը ակադեմիական միջավայրի ձևավորման համար,

- գիտակցել ԱրՊՀ առաքելությունը շրջանավարտի՝ որպես բարձր մասնագիտական ու բարոյական հատկանիշներ ունեցող անհատի պատրաստման գործում,

- ակադեմիական միջավայրում հասնել երկխոսության բարելավման, համայնքի անդամների միջև ժողովրդավարական հարաբերությունների ձևավորման:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

7. ԱՐԺԵՔՆԵՐ

➤ **Ազատություն.** ԱրՊՀ գլխավոր առաքելությունը գիտելիքի ստեղծումը, տարածումը և փոխանցումն է, իսկ գիտելիքը ազատություն է: ԱրՊՀ համայնքի յուրաքանչյուր անդամի համար ազատությունը և անձնական ընտրությունը՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական, բացարձակ և անվերապահ արժեք են:

➤ **Արժանապատվություն.** ուրիշներին հարգելը ինքնահարգանքի հիմքն է: ԱրՊՀ համայնքի անդամն ապրում և գործունեություն է իրականացնում մի միջավայրում, որը տևական ու դժվարին պայքարի ու հարաճուն զարգացման շնորհիվ վաստակել է արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքը:

➤ **Պետական և ազգային մտածելակերպ:** ԱրՊՀ համայնքի անդամի քաղաքացիական և մասնագիտական պարտքն է՝ պաշտպանել ազգային և պետական շահերը միջոց և ամենուրեք: ԱրՊՀ համայնքի անդամ լինելը ենթադրում է մի շարք գործառույթների իրականացում, որոնց միջոցով նա արտահայտում է իր անձնային կայուն դիրքորոշումները՝ մեր երկրի ու նրա ժողովրդի նվիրական իղձերի, կայուն առաջընթացի ու զարգացման, անվտանգության ապահովման վերաբերյալ:

➤ **Հայրենասիրություն:** Հայրենիքի, պետականության և հասարակության շահերի պաշտպանությունը ԱրՊՀ համայնքի անդամի բարձրագույն չափանիշներն ու վերջնական նպատակներն են: Նա պարտավոր է գործել՝ ելնելով երկրի ազգային շահերից՝ ի բարօրություն հանրության ու բնակիչների: Հայ ժողովրդի բազմադարյա ազգային արժեքներին ու ավանդույթներին հավատարիմ լինելը ԱրՊՀ համայնքի անդամի բարոյահոգեբանական նկարագրի առավել բնորոշ գծերն են, նրա ամբողջական կերպարի առավել ընդգծված բաղադրիչները:

➤ **Օրինապահություն:** ԱրՊՀ համայնքի անդամն ունի պետական մտածելակերպ, իր գործերով պահպանում և պաշտպանում է Արցախի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, ԱրՊՀ օրինական շահերը, իրեն ընձեռված հնարավորությունների

սահմաններում նպաստում է դրանց կատարելագործմանը, կառուցողական առաջարկություններով, գործողություններով ամրապնդում է իրավական պետության կայացման ու հեղինակության բարձրացման գործընթացը: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգանք պահպանել Արցախի Հանրապետության, նրա խորհրդանիշների և իշխանության մարմինների, ԱրՊՀ ղեկավարության և համայնքի բոլոր անդամների նկատմամբ:

➤ **Ինքնագիտակցություն և ինքնակատարելագործում.** Ճանաչի՛ր ինքդ քեզ և կատարելագործվի՛ր: ԱրՊՀ-ն լիարժեք հարթակ է սովորողների ինքնագիտակցության ձևավորման, իմաստավորման, իդեալների մշակման ու կյանքի կոչման համար:

8. ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

➤ **Կորպորատիվություն.** փոխօգնության և միասնական նպատակին համատեղ ձգտելու մթնոլորտ, վարչական, գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողների, սովորողների միջև փոխհարաբերությունների հիմք. փոխադարձ հարգանք, համագործակցություն, կոռեկտություն, չափի զգացում և բարեկրթություն:

➤ **ԱրՊՀ հեղինակության բարձրացմանն աջակցում են համայնքի բոլոր անդամները.** ԱրՊՀ համայնքի անդամն իրավունք չունի հանրային շահերը ստորադասել անհատների կամ զանազան խմբերի մասնավոր շահերից, դրանցից ելնելով՝ գործել ի վնաս պետությանը, հասարակությանը և համալսարանին:

➤ **Հանդուրժողականություն.** ԱրՊՀ համայնքի անդամը պետք է ձգտի համերաշխության մթնոլորտի հաստատմանը և չկատարի մարդկանց զգացմունքները վիրավորող, ԱրՊՀ մասին պատկերացումներն աղավաղող անազնիվ և անպատասխանատու արարքներ: Նրանք պետք է խուսափեն միմյանց հետ անհիմն կոնֆլիկտների մեջ մտնելուց և նման պահվածք ունեցող անձանց հետ գործնական շփումներից: Բոլոր դեպքերում, համայնքի անդամն ազատ է սահմանված կարգով բանավիճելու, արտահայտելու իր հատուկ կարծիքը, սակայն՝ պահպանելով հարգանքի, հանդուրժողականության, խոսքի ազատության սկզբունքները՝ առանց հեղինակազրկելու ԱրՊՀ և նրա համայնքի անդամի անունը, պատիվն ու հեղինակությունը:

➤ **Մարդասիրություն.** ամեն ինչ հանուն մարդու, ամեն ինչ ուղղված է նրա անձնային որակների և ներուժի զարգացմանը: ԱրՊՀ-ում անթույլատրելի են այն գործողությունները, որոնք հակասում են հասարակության բարոյական նորմերին և վնասում են անհատի շահերը, խաթարում են համայնքի անդամի բարոյահոգեբանական վիճակը, ենթադրում են ճնշման և հարկադրման միջոցների կիրառում:

Մասնագիտական, ուսումնական հասարակական կամ տնտեսական գործունեության իրականացման ժամանակ կարևորություն է տրվում համամարդկային արժեքներին:

Համընդհանուր պահանջ է՝ հարգալից վերաբերմունք բոլոր ժողովուրդների և նրանց մշակույթների հանդեպ, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների անվերապահ ճանաչում:

➤ **Արհեստավարժություն**

• ցուցաբերել մասնագիտական իրազեկություն պարտականությունները կատարելիս. իրազեկության հիմքը ծավալուն և մրցունակ մասնագիտական գիտելիքներն են, այդ գիտելիքը կիրառելու ունակությունը, զարգացած գաղափարական ներուժը, վարքագծի բարձր չափանիշները,

- ընդունել համարժեք որոշումներ,
- ձգտել կատարելագործել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները,
- կարողանալ գնահատել աշխատանքի արդյունավետությունը, որակը և արդյունքները,
- ցուցաբերել մեծ պատասխանատվություն, բարեխղճություն և ազնվություն,
- ցուցաբերել կազմակերպվածություն, պատշաճ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, խոսքի և գործի կատարյալ համապատասխանություն,
- ցուցաբերել խնդիրներն ողջամիտ ժամկետներում լուծելու և սեփական խոսքը, տեսակետը հիմնավորելու ունակություն,
- խստություն դրսևորել խոսքերի և արարքների նկատմամբ, ընդունել սխալները և բարեխղճորեն ուղղել դրանք,
- ձգտել հոգևոր և ֆիզիկական առողջության:

➤ **Ակադեմիական ազատություն**

ԱրՊՀ-ն ճանաչում և պաշտպանում է ակադեմիական ազատության գաղափարը որպես ուսուցման, հետազոտության և կրթվածության պատշաճ վարքագծի բաղկացուցիչ մաս:

ԱրՊՀ համայնքի անդամներն իրավունք ունեն օգտվելու տեղեկատվության տարբեր աղբյուրներից՝ չխախտելով հեղինակային իրավունքի նորմերը: ԱրՊՀ համայնքի անդամները կարող են ազատորեն ստեղծագործել՝ օգտագործելով իրենց հասանելի տեղեկատվությունը, բացառելով ապատեղեկատվությունը և գիտականությանը հակասող գաղափարների ու դրույթների տարածումը:

➤ **Ակադեմիական ազնվություն**

ԱրՊՀ-ն խթանում է բարեխղճությունը, ազնվությունը և պատասխանատվությունը: Գիտության գործունեության բնագավառում սուտը, խարդավանքը, գրագողությունը, կեղծիքը, անազնվությունը, խարդախությունը կամ ուրիշների աշխատանքի արդյունքների ապօրինի յուրացումը ակադեմիական ազնվության կանոնների կոպտագույն խախտումներն են, հետևաբար, անհանդուրժելի են:

➤ **Գաղտնիություն**

ԱրՊՀ համայնքի անդամներն իրավունք չունեն համապատասխան իրավասություն չունեցող անձին փոխանցելու մարդկանց անձնական և ընտանեկան, ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնի, ինչպես նաև ոչ գաղտնի տեղեկատվություն, եթե դա կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին ու առողջությանը, հեղինակությանը և համբավին: ԱրՊՀ համայնքի անդամներն իրավունք չունեն իրենց աշխատանքային գործունեության իրականացմանը չվերաբերող նպատակներով օգտագործելու, հրապարակելու կամ այլ կերպ մատչելի դարձնելու իրենց պարտականությունների իրականացման ընթացքում ստացած գաղտնի տեղեկատվությունը:

ԱրՊՀ համայնքի անդամներից պահանջվում է հարգել մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքը և իրենց վստահված տեղեկությանը վերաբերվել նույն սկզբունքով: ԱրՊՀ աշխատողին արգելվում է ծառայողական պարտականություններից դուրս հրապարակել կամ օգտագործել իր ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում կամ ծառայողական դիրքն օգտագործելու միջոցով հասանելի դարձած այն տեղեկատվությունը կամ դրա կրիչները (փաստաթղթեր, տեսասկավառակներ, ձայնասկավառակներ, ֆլեշկաներ և այլն), որոնք արտոնյալ պայմաններ կստեղծեն իր, փոխկապակցված անձի կամ այլ քաղաքացիների համար:

➤ **Անկողմնակալությունը և ազնվությունը աշխատանքի վայրում**

ԱրՊՀ-ն բոլորի համար ապահովում է հավասար պայմաններ և հավասար հնարավորություններ՝ ակադեմիական միջավայրում պահպանելով արդարություն, անկողմնակալություն և բացառելով թշնամանքի ու ոտնձգության որևէ դրսևորում:

9. Էթիկական սկզբունքներից բխող ընդհանրական պահանջներ. ԱրՊՀ համայնքի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ուղենիշ ընդունել հետևյալ սկզբունքային պահանջները՝

1) լինել օրինապահ, արդարամիտ, կարգապահ, զուսպ, անկեղծ, կշռադատված, բարեկիրթ, սկզբունքային, անկողմնակալ ու հաստատակամ և անհանդուրժող՝ իր և այլոց կողմից թույլ տրված սխալների, ոչ բարոյական վարքագծի նկատմամբ,

2) ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով, հարգել մարդու արժանապատվությունը, բացառել ոչ պատշաճ վարքագծի ցանկացած դրսևորում կոլեկտիվի անդամների, սովորողների, ԱրՊՀ մուտք գործած անձանց և այլ մարդկանց հետ շփումներում,

3) հետևել արտաքին տեսքին. այն չպետք է լինի ճշացող կամ անփույթ,

4) նախապատվություն չտալ ինչ-ինչ սոցիալական կամ մասնագիտական խմբերի և կազմակերպությունների, չենթարկվել առանձին քաղաքացիների, մասնագիտական կամ սոցիալական խմբերի և կազմակերպությունների ազդեցությանը,

5) ցուցաբերել հանդուրժողականություն և հարգանք այլ ազգերի սովորույթների նկատմամբ, հաշվի առնել տարբեր էթնիկական, սոցիալական ու կրոնական խմբերի մշակութային և այլ առանձնահատկությունները, նպաստել միջազգային և համակրոնական համաձայնությանը,

6) Էթիկայի նորմերը, երկրում ձևավորված քաղաքական մշակույթը և ԱրՊՀ պետական կարգավիճակը հուշում են, որ ԱրՊՀ համայնքի անդամն իր քաղաքական ակտիվ գործունեությունը կարող է իրականացնել միայն նրա սահմաններից դուրս:

10. Սկզբունքների կիրարկման մեթոդներ.

- արժեքային և աշխարհայացքային կողմնորոշումներում՝ համամարդկային և համընդհանուր սկզբունքների գիտակցում, յուրացում և ընդունում,

- ազգային կերպարի ձևավորման ոլորտում՝ հայ ժողովրդի ազգային ավանդույթների ոգով տոգորված բարոյահոգեբանական արժեհամակարգի ձևավորում, պահպանում,

- համալսարանական գործունեության մեջ՝ ակադեմիական ավանդույթների զարգացում, պահպանում, նորարարություն:

- ԱրՊՀ համայնքի անդամն ազատ է իր կողմնորոշումներում ու գործողություններում, սակայն նա չի կարող մասնակցել դասապրոցեսի խաթարումների և գործադուլների, չհայտարարված հանրահավաքների, հարցազրույցներ տալ և լրատվության միջոցներով բացահայտ կարծիք արտահայտել կամ ցանկացած այլ եղանակով կատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են ուղղված լինել մարդկության և մարդկայնության դեմ, շոշափելի վնաս պատճառել համամարդկային արժեքներին, մեր երկրի անվտանգության հիմքերին և այդ հարցում հակադիր լինել ԱրՊՀ ղեկավարության կայուն դիրքորոշումներին:

11. Շահերի բախում:

Շահերի բախումն այն իրավիճակն է, երբ համայնքի անդամն իր պարտականություններն իրականացնելիս կատարում է այնպիսի գործողություն կամ ընդունում այնպիսի որոշում,

որը, ողջամիտ մեկնաբանությամբ, նշանակում է առաջնորդվել իր անձնական կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով: Երբեմն գուգահեռ հարթության մեջ, այսինքն՝ համայնքի անդամների փոխհարաբերություններում, շահերի բախումն անխուսափելի կարող է լինել, ինչը չպետք է ազդեցություն ունենան ԱրՊՀ համայնքի անդամի կողմից իր պարտականությունների որակյալ կատարման վրա: ԱրՊՀ համայնքի անդամի պարտականությունների և մասնավոր շահերի բախումը առաջացնում է մի իրավիճակ, երբ ԱրՊՀ համայնքի անդամն ունի մասնավոր կարգավիճակից բխող շահեր, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ անձի պարտականությունների և գործառույթների վրա: Ցանկացած շահերի բախում պետք է բացահայտվի և անաչառ քննության ենթարկվի ԱրՊՀ համայնքի կողմից՝ Կանոնադրքով սահմանված կարգով:

12. ԱրՊՀ համայնքի անդամի գործողությունները շահերի բախման իրավիճակում

Շահերի բախում առաջանալու դեպքում ԱրՊՀ համայնքի անդամը պարտավոր է էթիկայի հանձնաժողովին գրավոր ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ նշելով ստեղծված իրավիճակին վերաբերող կոնկրետ հանգամանքներ: Մինչև էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը ստանալը ԱրՊՀ համայնքի անդամն իրավունք չունի տվյալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու: Էթիկայի հանձնաժողովը պարտավոր է աջակցել ԱրՊՀ համայնքի անդամին՝ շահերի բախումից խուսափելու համար:

13. Նվերներ

Նվեր է համարվում նյութական արժեք ունեցող ցանկացած իր կամ գործողություն, որը անվճար կամ անիրատեսորեն ցածր գնով մատուցվում է պաշտոնատար անձին՝ նրան համայնքի իրական շահերին չհամապատասխանող գործողության կամ անգործության մղելու մտադրությամբ: Վերադասի տված հրապարակային խրախուսանքները նվեր չեն համարվում:

Նվերները չպետք է մատուցվեն և ընդունվեն: ԱրՊՀ համայնքի անդամները, որոնց առաջարկվել է նվեր կամ որոնց նվեր է տրվել իրենց կամքին հակառակ, պետք է այդ մասին հայտնեն իրենց ղեկավարներին:

Եթե նվերը համագործակցող կազմակերպությունների, անհատների, բարեգործների կողմից ԱրՊՀ համայնքի անդամին տրվել է պարտականություններն ավելի որակյալ կատարելու համար կամ այդպիսի ակնկալիքով, ապա այն կարող է ընդունվել և ի սեփականություն հանձնվել ԱրՊՀ-ին:

ԱրՊՀ աշխատողը չպետք է պահանջի որևէ նվեր կամ ծառայություն՝ ի հատուցումն այն բանի, որ արվել է կամ կարվի, չի արվել կամ չի արվի՝ պարտականությունները կատարելիս: Այսպիսի գործողությունը կարող է դիտարկվել որպես շոթում:

Իրավական պահանջների պահպանմամբ և հրապարակայնության ապահովման պայմանով ԱրՊՀ աշխատողը կարող է ստանալ հիշարժան նվեր, պարգև կամ արտոնություն, եթե դա չի կարող գնահատվել իբրև իր պարտականությունները կատարող աշխատողի վրա ազդելու դիտավորություն կամ նրա անաչառությունը կասկածի տակ դնելու հիմք:

Դասախոսի կողմից սովորողի գիտելիքների, հմտությունների, կարողությունների գնահատման (քննություն, ստուգարք և այլն) համար նվերներ, արտոնություններ և ծառայություններ ստանալն անհամատեղելի է նրա կարգավիճակի հետ և պետք է առաջացնի

պատասխանատվություն: Շորթումը, կաշառք վերցնելը և կաշառք տալը հանցագործություն է և պատժվում է օրենքով:

14. ԱրՊՀ ռեսուրսների օգտագործումը. ԱրՊՀ համայնքի անդամները պետք է վստահ լինեն, որ ԱրՊՀ ռեսուրսները կամ սեփականությունը նպատակային են շահագործվում: ԱրՊՀ համայնքի անդամներից պահանջվում է պատասխանատվությամբ մոտենալ ԱրՊՀ ռեսուրսներին: Դրանք պետք է օգտագործվեն արդյունավետ և խնայողաբար: ԱրՊՀ գույքը չի կարելի օգտագործել անձնական նպատակներով:

15. ԱրՊՀ անվան օգտագործումը

ԱրՊՀ համայնքի անդամները չպետք է օգտագործեն ԱրՊՀ ներկայացուցչի հեղինակությունն անձնական, ընտանեկան կամ իր հետ կապված այլ շահեր իրականացնելու նպատակով: ԱրՊՀ համայնքի անդամները մասնագիտական կամ փորձագիտական լիազորությունների շրջանակներում կարող են գրավոր կամ բանավոր կերպով ներկայանալ՝ օգտագործելով ԱրՊՀ անունը՝ ԱրՊՀ ղեկավարության գիտությամբ:

3. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԱՐՊՀ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

16. ԱրՊՀ աշխատողներին ներկայացվում են էթիկական որոշակի պահանջներ. ԱրՊՀ աշխատողը՝

1) ունի պատասխանատվության բարձր զգացում, նվիրված է իր աշխատանքին, բարձր է պահում մասնագիտության վարկանիշը և պատասխանատվությամբ է վերաբերվում իր պարտականությունների կատարմանը:

2) պահանջկոտ է սեփական անձի նկատմամբ և հետևողականորեն զբաղվում է ինքնակրթությամբ, աշխատում իր որակավորման բարձրացման ուղղությամբ, որոնում աշխատանքի ավելի արդյունավետ մեթոդներ:

3) աշխատանքային գործունեության ընթացքում թույլ տրված խախտումների ու թերությունների բացահայտումն ու օբյեկտիվ քննադատությունը պետք է ընդունի ըմբռնումով, անհրաժեշտ հետևություններ կատարի և միջոցներ ձեռնարկի՝ դրանք վերացնելու համար:

4) ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ իրավունք ունի ազատ արտահայտելու իր տեսակետը, համոզմունքը: Կարծիք արտահայտելիս նա չի կարող առաջնորդվել ենթադրություններով, հույզերով, սուբյեկտիվ պատկերացումներով, կողմնակի ազդեցություններով: Աշխատողը պետք է լինի ուրիշի կարծիքը լսող, հարգող և այլակարծությունը հանդուրժող:

17. ԱրՊՀ աշխատողը պարտավոր է՝

1) բարեխղճորեն կատարել մասնագիտական պարտականությունները,

2) միջոցներ ձեռնարկել իր գիտելիքների հարստացման ուղղությամբ և ձեռք բերած գիտելիքները մշտապես օգտագործել մասնագիտական գործունեություն իրականացնելիս,

3) միջոցներ ձեռնարկել հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ,

4) բացառել անձնական, գույքային կամ ֆինանսական և այլ շահերի հետ կապված այնպիսի գործողություններ, որոնք խանգարում են նրա կողմից աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարմանը,

5) գործընկերների հետ հարաբերություններում նպաստել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, գործընկերների նկատմամբ լինել հարգալից, հավասարակշռված, չխոչընդոտել նրանց պաշտոնական լիազորությունների իրականացմանը,

6) միջանձնային հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, աշխատավայրում ձայնը չբարձրացնել, խնայել իր և գործընկերոջ ժամանակը,

7) գործընկերների նկատմամբ ցուցաբերել հարգանք, հանդուրժողականություն և համագործակցելու պատրաստականություն՝ բացառելով որևէ խտրականություն: Նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն համապատասխան հարթակներում՝ պարզաբանելով բոլոր հիմքերը,

8) չչարաշահել պաշտոնական դիրքը կամ ԱրՊՀ հեղինակությունը իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար,

9) չհրապարակել իրեն հայտնի դարձած ծառայողական գաղտնիքը, գործել բացառապես իրեն վերապահված լիազորությունների շրջանակում,

10) պատրաստականություն դրսևորել օգնելու և աջակցելու գործընկերներին,

11) մշտապես պահպանել ներքին կարգապահական կանոնները և սույն Կանոնագրքով սահմանված նորմերը,

12) հանգամանորեն և օբյեկտիվորեն վերլուծել այն բոլոր դեպքերը, որոնք շեղվում են ընդունված վարքագծի նորմերից, հապճեպ գնահատականներ չտալ:

18. Ի թիվս սույն Կանոնագրքով սահմանված այլ պահանջների՝ ԱրՊՀ դասախոսը՝

1) ձգտում է արհեստավարժության բարձր մակարդակի, մշտապես կատարելագործում է իր մասնագիտական և մանկավարժահոգեբանական կարողությունները,

2) բարձր մշակույթի կրող է, արժանապատվություն ունեցող, հանդուրժողականություն դրսևորող անձ, ով նպաստում է սովորողների բարոյական և մշակութային զարգացմանը,

3) չի ուշանում դասից, իսկ բացակայելու մասին առնվազն մեկ օր առաջ տեղեկացնում է համապատասխան ամբիոնին,

4) նպաստում է սովորողների շրջանում ԱրՊՀ նկատմամբ հարգանքի ձևավորմանը,

5) որևէ կերպ չի հետապնդում ուսանողներին՝ քննադատության, կարծիք արտահայտելու պատճառով:

19. ԱրՊՀ դասախոսը ուսումնական գործընթացի ժամանակ՝

1) սովորողների նկատմամբ չի ցուցաբերում որևէ խտրականություն, այդ թվում՝ գենդերային,

2) ուսումնական ժամանակը չի ծախսում սովորողներին իր խնդիրների ու գործընկերների հետ անձնական հարաբերությունների մասին պատմելու վրա,

3) խթանում է սովորողների արտաուսումնական ակտիվությունը՝ ուղղված մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ուսանողական ինքնավարությանը,

4) որևէ կերպ չի նսեմացնում սովորողի պատիվն ու արժանապատվությունը,

5) առանց հիմնավոր պատճառների չի խոչընդոտում սովորողների կողմից պարապմունքներին ներկա գտնվելու իրավունքի իրացմանը:

20. ԱրՊՀ դասախոսը անաչառ է սովորողների գիտելիքները գնահատելիս, նրա տված գնահատականները հիմնավոր և անկողմնակալ են, օբյեկտիվ և արդարացի: Նա չի կարող բարձրացնել կամ իջեցնել սովորողի գնահատականը սեփական հայեցողությամբ,

առաջադիմությունը արհեստականորեն բարձրացնելու նպատակով նրանց փոխարեն ուղղել թույլ տրված սխալները կամ քողարկել դրանք:

21. Գիտելիքների գնահատման (ստուգարք, քննություն և այլն) ժամանակ դասախոսը հետևում է էթիկայի հետևյալ կանոններին՝

1) ստուգելու և գնահատելու իր իրավունքը չի գործադրում սովորողներին ահաբեկելու, ստուգումները չհանձնելու վերաբերյալ հոգեբանական մտավախություն ստեղծելու համար,

2) չի սահմանում գիտելիքների, հմտությունների և կարողությունների ստուգման չափազանց բարձր կամ չափազանց ցածր պահանջներ,

3) թույլ չի տալիս, որ իր հոգեհուզական վիճակը ազդեցություն թողնի սովորողի գիտելիքների գնահատման գործընթացի վրա,

4) քննության կամ ստուգարքի ընթացքում թույլ չի տալիս գնահատման չափանիշների, քննության կամ ստուգարքի հանձնման պայմանների կամայական փոփոխություն:

4. ՍՈՎՈՐՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

22. Ի թիվս սույն Կանոնագրքով սահմանված այլ պահանջների՝ ԱրՊՀ սովորողը՝

1) ձգտում է դառնալ հայրենասեր և իր երկրի արժանի քաղաքացի, արհեստավարժ մասնագետ,

2) պահպանում է ԱրՊՀ ավանդույթները, ապահովում և բարձրացնում է ԱրՊՀ հեղինակությունը և նոր սովորողներին օգնում է հարմարվելու միջավայրին,

3) ԱրՊՀ-ի ներսում և ԱրՊՀ-ից դուրս պահպանում է համամարդկային բարոյական նորմերը,

4) չի նսեմացնում դասախոսների և այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը, հարգում է մեծերին, ցուցաբերում է հանդուրժողականություն, հարգալից վերաբերմունք այլ անձանց սովորույթների և ավանդույթների նկատմամբ:

23. ԱրՊՀ սովորողը բարեխղճորեն է վերաբերվում ուսումնական պարապմունքներին և վերահսկողության ձևերին, ուսումնական գործընթացում թույլ չի տալիս անազնիվ դրսևորումներ ինչպիսիք են՝

1) առանց հարգելի պատճառի բացակայությունները,

2) բացակայություններն արդարացնելու կեղծ պատճառները,

3) իր և ուրիշների ժամանակը չհարգելը (ուշացումներ, անպատասխանատվություն),

4) այլ անձանց փոխարեն վերահսկողության գործընթացն անցնելը, այլոց համար ուսումնական աշխատանքներ կատարելը, այլ անձանց կողմից պատրաստված ուսումնական առաջադրանքներ ներկայացնելը,

5) պատրաստի ուսումնական նյութերը (ռեֆերատ, կուրսային, մագիստրոսական թեզ) որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը:

24. Սովորողը ցուցաբերում է հարգանք դասախոսի և ընկերների աշխատանքի նկատմամբ.

1) լսարանում դասի ժամանակ չի զբաղվում այլ աշխատանքով,

2) չի ընդհատում դասախոսին կամ ընկերներին,

3) դասի ժամանակ և գնահատման գործընթացներում չի օգտագործում բջջային հեռախոս և կապի այլ միջոցներ,

4) ԱրՊՀ տարածքում և շենքում պահպանում է պատշաճ մաքրություն, դասի ընթացքում՝ լռություն, չի աղմկում դասամիջոցին,

5) պահպանում է լրություն գրադարանում, համակարգչային լսարաններում և այլ սենյակներում, որոնք նախատեսված են ուսումնական և գիտական գործունեության համար:

25. ԱրՊՀ սովորողը իր հնարավորությունների ու կարողությունների չափով աջակցում է բուհում ակադեմիական միջավայրի ներդաշնակ զարգացմանն ուղղված ցանկացած տեսակի գործունեությանը՝ անհրաժեշտ և օգտակար համարելով՝

- 1) սովորողի ինքնավարության զարգացումը,
- 2) ուսանողական ակտիվության ուսումնագիտական ձևերի զարգացումը,
- 3) սովորողի գեղարվեստական ստեղծագործության զարգացումը,
- 4) մարզական-առողջարանային գործունեության զարգացումը,
- 5) ԱրՊՀ կորպորատիվ մշակույթի բարելավումը,
- 6) երիտասարդների մասնագիտական կողմնորոշումը:

26. ԱրՊՀ սովորողը՝

1) ձգտում է դրսևորել հազնվելու լավ ճաշակ, ուշադրություն է դարձնում արտաքին տեսքին, խուսափում է չափազանց վառ շպարից, զարդերի առատությունից,

2) պահպանում է ԱրՊՀ ուսուցման տեխնիկական միջոցները և խնամքով վերաբերվում ԱրՊՀ գույքին,

3) ապահովում է առողջ ապրելակերպի սկզբունքները և նպաստում ուսանողական միջավայրում դրանց պահպանմանը,

4) հրաժարվում է վնասակար սովորույթներից, ինչպիսիք են ծխելը, ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր օգտագործելը, և մյուսներին նույնպես հորդորում է հրաժարվել դրանցից,

5) թույլ չի տալիս անպարկեշտություն, կոպտություն, անտակտություն, խուսափում է ժարգոնային արտահայտություններից, համարժեք է վերաբերվում արդարացի դիտողություններին:

27. ԱրՊՀ սովորողը՝

1) կարևորում է այնպիսի նախաձեռնությունները, ինչպիսիք են բարեգործությունը, կամավորականությունը, դոնորությունը, և հնարավորինս աջակցում է դրանց,

2) իր հնարավորությունների սահմաններում նպաստում է ուսանողական միջավայրում սույն Կանոնագրքի նորմերի պահպանմանը, ինչպես նաև այլ սովորողների կողմից ոչ էթիկական վարքի դրսևորման կանխարգելմանը,

3) գիտակցում է, որ սույն Կանոնագրքում նշված դրույթների խախտումն իջեցնում է իր սեփական վարկանիշը և վնասում ԱրՊՀ հեղինակությանը:

5. ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

28. ԱրՊՀ-ում գործում է էթիկայի հանձնաժողով, որը կազմված է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողով ձևավորելու համար ԱրՊՀ վարչական, գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրվում են բարոյական բարձր հատկանիշներ ունեցող և համայնքի անդամների հարգանքից օգտվող 6, ուսանողական խորհրդի կողմից՝ մեկ, թեկնածուներ: ԱրՊՀ գիտական խորհուրդը անվանական և փակ զադանի քվեարկությամբ ընտրում է հանձնաժողովի կազմը՝ միաժամանակ ընտրելով հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Ընտրված են համարվում առավելագույն ձայներ հավաքած 7 թեկնածուները:

29. Էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

30. Էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) անձնական դիմումի հիման վրա,

2) երեք անգամ էթիկայի հանձնաժողովի նիստերից անհարգելի բացակայելու դեպքում,

3) էթիկայի կանոնները խախտելու դեպքում,

4) ԱրՊՀ համայնքի հարգանքն ու վստահությունը կորցնելու դեպքում,

5) առողջական վիճակի, ԱրՊՀ հետ հարաբերությունները խզելու կամ այլ պատճառներով հետագա անդամակցությունը անհնարին դառնալու դեպքում,

31. Էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելու դեպքում նրա կազմը համարվում է Կանոնագրքով սահմանված կարգով:

6. ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Էթիկայի հանձնաժողովի հիմնական խնդիրը ԱրՊՀ-ում Կանոնագրքով սահմանված դրույթների պահպանմանը նպաստելն է:

33. Էթիկայի հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում՝

- 1) քննում է իրեն ուղղված դիմումներ.
- 2) տարածում է բարոյական արժեքները և էթիկական նորմերը, նպաստում դրանց ամրապնդմանը, կազմակերպում է քննարկումներ, լուսաբանում իր աշխատանքը.
- 3) քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է եզրակացություններ, տալիս է պարզաբանումներ.
- 4) իրականացնում է Կանոնագրքով նկարագրված և էթիկական նորմերի ու պահանջների տրամաբանությունից բխող այլ լիազորություններ:

7. ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

34. Էթիկայի հանձնաժողովի գործունեության գլխավոր սկզբունքներ են թափանցիկությունը, մատչելիությունը, արդարությունը և պարկեշտությունը: Յուրաքանչյուր ոք Կանոնագրքի խախտման դեպքի մասին կարող է գրավոր միջնորդել ԱրՊՀ ռեկտորին իր դիմումը ներկայացնելու էթիկայի հանձնաժողովի քննարկմանը, ոչ ուշ քան խախտման դեպքն իրեն հայտնի դառնալուց հետո եռօրյա ժամանակահատվածում:

Էթիկայի հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու հիմք կարող են հանդիսանալ նաև ռեկտորին ուղղված՝ պաշտոնատար անձանց և համայնքի անդամների դիմումները, ներկայացումները, տեղեկությունները, վերլուծությունները և այլ փաստաթղթերը, եթե դրանցում առկա են համայնքի անդամների կողմից վարքագծի կանոնների խախտման դեպքերի մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ:

35. Գրավոր դիմումը, տեղեկությունը պետք է պարունակի՝

- 1) դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն,
- 2) այն անձանց անունները և տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, աշխատողի գրադեցրած պաշտոնը, սովորողի մասնագիտությունը, կուրսը), ովքեր, ըստ դիմատուի, խախտել են Կանոնագրքի պահանջները,
- 3) դիմումի առարկան (վիճարկվող վարքագծի համառոտ նկարագրությունը).
- 4) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե կան).
- 5) դիմումը ներկայացնելու ժամանակը (տարին, ամիսը, ամսաթիվը):

36. Կանոնագրքի 35-րդ կետով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջները չպահպանելու դեպքում, եթե դրանք հնարավոր չէ ուղղել, էթիկայի հանձնաժողովը կարող է դիմումը քննության չառնել:

37. Էթիկայի հանձնաժողովը հարցը քննում է դիմումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում: Անհրաժեշտության դեպքում այդ ժամկետը կարող է երկարաձգվել, սակայն ոչ ավելի, քան ևս մեկ շաբաթ:

38. Էթիկայի հանձնաժողովը դիմում ներկայացրած և հարցին առնչվող անձանցից կարող է պահանջել անհրաժեշտ հիմնավորումներ, բացատրություններ, փաստաթղթեր կամ այլ հիմքեր, որոնք հնարավորություն կտան պարզելու էթիկայի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը:

39. Եթե էթիկայի հանձնաժողովի կողմից լիարժեք քննության անցկացման համար ծագել են խոչընդոտներ, ապա հանձնաժողովը իրավասու է գրավոր դիմելու ԱրՊՀ ռեկտորին՝ քննության շահերից էլնող հանձնարարականներ ստանալու և քննությանը պաշտոնատար անձանց ներգրավելու առաջարկությամբ:

40. ԱրՊՀ համայնքի անդամները կարող են դիմել էթիկայի հանձնաժողովին՝ վարքագծի կանոնների պահպանման վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար: Հանձնաժողովն այդ դիմումներին պատասխանում է 5 աշխատանքային օրերի ընթացքում:

41. Էթիկայի հանձնաժողովին հայց ներկայացրած անձի (կամ այն անձի, որին առնչվում է ներկայացված հարցը) բացակայությունը չի խոչընդոտում հանձնաժողովի կողմից սվյալ հարցի քննությանը:

42. Էթիկայի հանձնաժողովը հարցերի քննությանը կարող է ներգրավել ոչ շահագրգիռ անձանց և անկախ մասնագետների՝ իրավաբանների, տնտեսագետների, հոգեբանների:

43. Քննության ավարտին էթիկայի հանձնաժողովը դիմումատուին եզրակացություն կամ հիմնավորված պատասխան է տալիս քննված հարցի վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան առաջարկություն է ներկայացնում ԱրՊՀ ռեկտորին:

44. Եթե էթիկայի հանձնաժողովը հաստատված է համարում Կանոնագրքի պահանջների խախտումը և հանգում է կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության մասին եզրակացության, ապա ռեկտորին ներկայացվում է գրավոր առաջարկություն:

8. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

45. Էթիկայի հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի կեսից ավելի անդամների նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի, տեղեկության առկայության պարագայում:

46. Էթիկայի հանձնաժողովի նիստերը իրավագոր են առնվազն 5 (հինգ) անդամի մասնակցության դեպքում: Գումարված նիստերը պարտադիր արձանագրվում են:

47. Էթիկայի հանձնաժողովի եզրակացություններն ընդունվում են փակ, գաղտնի քվեարկությամբ՝ կողմ քվեարկած ձայների որակյալ մեծամասնությամբ՝ առնվազն 4 կողմ ձայնով: Էթիկայի հանձնաժողովի անդամները քվեարկում են կողմ կամ դեմ: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Քննարկման ժամանակ որոշման նախագծին դեմ արտահայտվելու դեպքում հանձնաժողովի անհամաձայնությունն արտահայտած անդամի առանձնահատուկ կարծիքը պարտադիր կցվում է եզրակացությանը: Կողմ և դեմ քվեարկված ձայների հավասարության կամ դրանց անբավարարության պատճառով որոշում չընդունելու դեպքում հանձնաժողովը հարցը լուծում է այն անձի օգտին, ում գործողությունների նկատմամբ որոշում պետք է ընդունվեր:

48. Էթիկայի հանձնաժողովի նախագահը՝

- 1) հրավիրում և վարում հանձնաժողովի նիստերը.
- 2) որոշում է նիստի անցկացման ժամանակը և վայրը.
- 3) կազմում է հանձնաժողովի նիստի օրակարգը՝ այն հնարավորինս համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ,
- 4) ստորագրում է հանձնաժողովի անունից կազմվող փաստաթղթերը,
- 5) ապահովում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից տեսակետ ձևավորելու և արտահայտելու համար անհրաժեշտ պայմաններ,
- 6) ներկայացնում է հանձնաժողովը և հանդես է գալիս նրա անունից,
- 7) իրականացնում է Կանոնագրքի պահանջներից բխող և իրեն վերաբերվող այլ լիազորություններ:

49. Էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում վարում է հանձնաժողովի նիստերը, իսկ տևական բացակայության դեպքում՝ փոխարինում է նրան:

50. Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) պատրաստում է հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ նիստերի օրակարգեր, որոշումներ, եզրակացություններ, պարզաբանումներ, առաջարկություններ և դրանց նախագծեր,
- 2) հանձնաժողովի անդամներին, այն անձին, որի ներկայացմամբ քննարկվում է հարցը և որի հետ կապված է հարցի քննությունը, ողջամիտ ժամկետ
- 3) ում տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին.
- 4) արձանագրում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում և նախագահի ստորագրությանն է ներկայացնում արձանագրությունը.
- 5) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները աշխատանքի կազմակերպման վերաբերյալ:

6) իրականացնում է սույն Կանոնագրքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

51. Էթիկայի հանձնաժողովի անդամը՝

- 1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.
- 2) ինքնուրույն ուսումնասիրում, կարծիք է ձևավորում և առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.
- 3) իրականացնում է սույն Կանոնագրքով իրեն վերապահված այլ լիազորություններ,
- 4) կատարում է հանձնաժողովի նախագահի կողմից հանձնարարված աշխատանքներ:

9. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

52. ԱրՊՀ համայնքի անդամների կողմից անհրաժեշտ վարքագիծ դրսևորելու համար էթիկայի հանձնաժողովը համայնքին պարբերաբար տրամադրում է պարզաբանումներ:

53. Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունները և պարզաբանումները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

54. Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է անհամաձայնություն արտահայտած անդամի հատուկ տեսակետը:

55. Ընդունված եզրակացությունը 2 (երկու) աշխատանքայի օրերի ընթացքում տրամադրվում է դիմումատուին և այն անձին, ում հետ կապված էր հարցի քննությունը, իսկ

կարգապահական տույժ կիրառելու անհրաժեշտության դեպքում՝ նաև ԱրՊՀ ռեկտորին՝ կարգապահական տույժ կիրառելու առաջարկությամբ:

56. Էթիկայի հանձնաժողովի բովանդակային պարզաբանումները ընդունված եզրակացությունների վերաբերյալ պարտադիր են:

57. Էթիկայի հանձնաժողովի պարզաբանումների հասանելիությունը ԱրՊՀ համայնքի անդամներին ապահովում են ԱրՊՀ ընդհանուր բաժինը, սովորողի դեպքում՝ Ուսանողական խորհուրդը:

10. ԱՐՊՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

58. Կանոնագրքի դրույթները կազմում են քաղաքացիներին աշխատանքի ընդունելու և ԱրՊՀ սովորողների ուսումնառության պայմանների մի մասը: Դրանք չպահպանելը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, որը կիրառում է ԱրՊՀ ռեկտորը՝ էթիկայի հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա:

59. Էթիկայի կանոնների խախտման դեպքում, զանցանքի ծանրությունից ելնելով, ԱրՊՀ աշխատողի կամ սովորողի նկատմամբ կարող են կիրառվել գործող օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր:

60. ԱրՊՀ աշխատողի կամ սովորողի նկատմամբ կիրառված տույժերը ձևակերպվում են գրավոր և հաշվառվում անձնական գործում:

61. Կարգապահական տույժի ենթարկելն աշխատողին կամ սովորողին չի ազատվում քրեական կամ նյութական պատասխանատվությունից: